ՔԱՂՎԱԾՔ

«Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 09.02.2022թ.-ին կայացած արտահերթ նիստի N 08 արձանագրությունից

Նիստին մասնակցում էին Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի բոլոր 9 անդամները:

Օրակարգային հարցերից էր 2022 թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի քննարկումը:

Զեկուցող Էլ. Թումանյանը 2022 թվականի եկամուտների բաժնում ներկայացրեց սուբսիդավորման թիվը, որը կազմում է 70907.9 հազար դրամ:

Նա նշեց, որ այս բաժնում ներկայացված են նաև տարակարգ ստացած ուսուցչի գումարը (1 ուսուցիչ) 142.1 հազար դրամ և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի գումարը (1 ուսուցիչ) 1134.0 հազար դրամ:

Տարվա վերջին մնացորդը կազմել է 11507.0 հազար դրամ, որից 7434.9 հազար դրամը 2021 թվականի դեկտեմբերին ԿԳՄՍՆ-ի կողմից որպես դրամաշնորհ տրամադրված գումարն է՝ դպրոցի մարզադահլիճի մասնաշենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար, իսկ 2251.5 հազար դրամը ՀՀ կառավարության որոշմամբ գույքի ձեռք բերման համար դպրոցին տրամադրված 4714.0 հազար դրամի մնացորդն է:

Ըստ այդմ, դպրոցի ընդհանուր եկամուտը 2022 թվականին կազմում է 83691.0 հազար դրամ:

Ծախսային մասը տնօրեն Էլ. Թումանյանը ներկայացրեց մի քանի կետով՝

1. Աշխատավարձի ֆոնդը կազմում է 67546.1 հազար դրամ:
2. Կոմունալ ծախսերի համար նախատեսվել է 3100.0 հազար դրամ:
3. Հատուկ նպատակային ծախսերի համար տրամադրվել է 850.0 հազար դրամ:
4. Ներկայացուցչական ծախսերի համար նախատեսվել է 328.5 հազար դրամ:
5. Մասնագիտական ծառայությունների մատուցման հոդվածով նախատեսվել է 1220.0 հազար դրամ (ընդ որում՝ կաթսայատան տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման համար՝ 1140.0 հազար դրամ):

Հիմք ընդունելով տնօրեն Էլ. Թումանյանի զեկույցը՝ կառավարման խորհուրդը

Որոշեց

հավանություն տալ 2022թ.-ի եկամուտների և ծախսերի ներկայացված նախահաշվին և այն ներկայացնել ԿԳՄՍՆ հաստատման:

Խորհրդի նախագահ՝ Ն. Ալավերդյան